Հայ Եկեղեցու Համաշխարհային
Երիտասարդական Միավորում
Կենտրոնական գրասենյակ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին - Երևան

Armenian Church Youth
Organisation World
Central office, Mother See of Holy Etchmiadzin - Yerevan

N 106 23 մարտ, 2021

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ
ՏԵՐ ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ
Բրրբենք, ԱՄՆ

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Տեղեկացնում եմ, որ ՀԵՀԵՄ Կենտրոնական գրասենյակի և **«Teach For Armenia»** կրթական հիմնադրամի հետ գործընկերական հարաբերությունների արդյունքում «Դասավանդիր Հայաստան» երկամյա ծրագիրը Թեմական-երիտասարդական կառույցներին հասու դարձնելու առաջարկ ենք ստացել: Ծրագիրը հնարավորություն է տալիս Հայրենիքի և Սփյուռքի կրթական ոլորտում մասնագետ երիտասարդներին իրենց գիտելիքները ներդնելու և աշխատելու Հայաստանի հանրակրթական դպրոցներում:

Այսու խնդրում եմ Ձերդ Սրբազնության տնօրինությունը՝ հիշյալ հիմնադրամի կողմից տրամադրված կից փաթեթը Թեմական-երիտասարդական լայն շրջանակներին, թեմի տարածքում գործող այլ կառույցներին, ինչպես նաև հնարավորության դեպքում թեմի տեղեկատվական միջոցներով տարածելու առնչությամբ:

Առ Աստված աղոթքով մաղթում եմ Ձերդ Գերաշնորհությանը քաջառողջություն և առաջնորդական գործոց հարանոր հաջողություններ:

Խոնարհաբար՝
Մատչիմ ի համբոյր Ձերդ Սրբազնութեան Օծեալ Աջոյն

ԹՈՎՄԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԵՀԵՄ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒՉ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՏՆՕՐԵՆ

Առդիր՝ 8 էջ:

Abovyan str. 15/1, Yerevan, Republic of Armenia; Tel: + 374 43 70 17 00; e-mail: hayrtovma@hehem.am
Catholicosate of All Armenians, Mother See of Holy Etchmiadzin